ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 52

Երկու հազար տասնհինգ թվականի մարտի քսաներեքին

ք. Ջերմուկ

Մենք, ՀՀ ք. Ջերմուկի համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանս, անձնագիր AG0671818, տրված 31.05.2006թ., 035-ի կողմից, ք. Ջերմուկի քաղաքապետարանի հասցեն՝ Մյասնիկյան փողոց, շենք 8, <<Վարձատու>> մի կողմից և ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության պետ Ռոմա Ռաֆայելի Մկրտումյանս, հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռ 14 փողոց, շենք 1, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնին կից, պահպանության բաժանմունքի պետ Արտավազդ Վարազդատի Գևորգյանը, հաշվառված ք. Ջերմուկ, Զախափնյակ, շենք 8, բն. 39, անձնագիր AG0671737, տրված 31.03.2006թ., 035-ի կողմից, այսուհետ՝ <<Վարձակալ>>, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն և օգտագործմանը հանձնել Ջերմուկի համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, թիվ 8 /ութ/ հասցեի տակ գտնվող շենքի 47,9 / քառասունյոթ ամբողջ ինը տասնորդական/ ք.մ ոչ բնակելի տարածքը:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին /սեփականության իրավունքի վկայական N 2579925 տրված՝ 31.07.2009թ.՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վայքի տարածքային ստորաբաժանման կողմից/:

1.3. Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, հիմք՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ջերմուկի տարածքային ստորաբաժանման կողմից տրված N ՍՏ – 19032015-10-0023 միասնական տեղեկանքի, տրված 19.03. 2015թ.:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման- ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2. Տարածքի վարձակալության ժամկետն սկսվում է 01.01.2015թ. / մեկը հունվարի երկու հազար տասնհինգ թվականից/ մինչև 01.01.2020թ / մեկը հունվարի երկու հազար քսան թիվ/: :

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքի ամսական վարձավճարը կազմում է 6000/ վեց հազար / ՀՀ դրամ գումար:

3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում եռամսյա կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարձատուն պարտավոր է՝

4.1.1. Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին.

4.1.2. Տարածքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում

4.1.3. Ոչ ուշ, քան վեց ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել տարածքն ազատելու անհրաժեշտության մասին.

4.2. Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1. Պահանջել Վարձակալից՝ տարածքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել տարածքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար.

4.2.3. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է տարածքի վիճակը,սույն պայմանագրի 3-րդ կետով

նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը.

4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ վեց ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին.

4.3. Վարձակալը պարտավոր է՝

4.3.1. Ժամանակին վճարել տարածքը օգտագործելու համար վարձավճարը:

4.3.2. Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքը՝ դրա զննման և ստուգման համար.

4.3.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և տարածքի նշանակությանը համապատասխան:

4.4. Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1. Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող տարածք, պահանջել հանձնելու համապատասխան տարածք կամ հրաժարվել հանձնված տարածքից, իսկ եթե տարածքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

4.4.2. Տարածքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու տարածքին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով Վարձատուին :

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի / զրո ամբողջ հինգ տոկոսի / չափով:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 0,05 %-ի /զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի/ չափով :

5.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 % -ի / զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի / չափով:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:

5.8. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուսը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում՝ գրանցելու համար:

5.9. Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական տարածքում պահվող օրինակին:

ՎԱՐՁԱՏՈՒ Ջերմուկի քաղաքապետարան Ք. Ջերմուկ Մյասնիկյան 8 շենք ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900365031138 ՀՎՀՀ 09001192	ՎԱՐՁԱԿԱԼ ՀՀ ոստիկանության Վայոց ձորի ՄՎ Ջերմուկի բաժնին կից պահպանության բաժանմունք ք. Ջերմուկ Մյասնիկյան 8 շենք ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900363013013 ՀՎՀՀ 09000698
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ

Երկու հազար տասնհինգ թվականի մարտի քսաներեքին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Վայք /Ջերմուկ/ նոտարական տարածքի նոտար Ստեփան Ստեփանյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը, իրավաբանական անձանց ներկայացուցիչների լիազորությունները, գույքի նկատմամբ Ջերմուկի քաղաքապետարանի սեփականության իրավունքները ստուգված են :
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Վայքի տարածքային ստորաբաժանումում 30/երեսուն/ օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում՝ ----------ով

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ <<Պետական տուրքի >> և <<Նոտարիատի մասին >> օրենքների:

Նոտար՝ Ս.Ստեփանյան
ստորագրություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ամ 2017-05-03

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»

Համայնքային կառավարչական հիմնարկ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

Գրանցման համար	**44.181.956779**
Հիմնադրման տարի	**2017**
Գրանցման ամսաթիվ	**2017-05-03**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**50442010**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**08913735**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**36186779**
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**ՄՅԱՍՆԻԿՅԱՆ / Տ / 8 ՋԵՐՄՈՒԿ 3701 ՎԱՅՈՑ ՁՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**060747077**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Աշխատակազմի քարտուղար**
Անուն Ազգանուն	**ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԷԴԻԿԻ**
Անձնագրային տվյալներ	**AN0576950 2013-07-19 035**
Հասցե	**ՁԱԽԱՓՆՅԱԿ Փ. / Շ / 2 / 6 ՋԵՐՄՈՒԿ 3702 ՎԱՅՈՑ ՁՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Գոհար Հարությունյան Աշոտի**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **03-05-2017**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՆՋԱՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2018թ. N 27-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի,հաշվի առնելով ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Ջերմուկի պահպանության բաժանմունքի պետ Վ. Գրիգորյանի դիմումը (մտից՝ 2018 թվականի փետրվարի 23-ի N 176) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի և ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Ջերմուկի պահպանության բաժանմունքի (այսուհետ՝ Վարձակալ)՝ ի դեմս պետ Ա. Գևորգյանի, միջև 2015 թվականի մարտի 23-ին (վավերացված է 23.03.2015 թ. Վայք (Ջերմուկ) նոտարական տարածքի նոտարի N 52 սեղանամատյանում) ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

- *պայմանագրի 3.1-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքի տարեկան վարձավճարը կազմում է 72 000 (յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ գումար:»,*
- *պայմանագրի՝ Կողմերի վավերապայմանների հատվածում Վարձատուի ՀՎՀՀ-ի «09001192» փոխարինել «08913735» թվով,*
- *պայմանագրի բովանդակության մեջ «քաղաքապետարան» բառը փոխարինել «համայնքապետարան» բառով*

2. Վարձակալի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

5. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարձակալին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 փետրվարի 26
Ջերմուկ

Նոտարական ակտի կոդ: 614-20180301-131-2279419
Նոտարական ակտի գաղտնագիր: PQ096A

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկու հազար տասնութ թվականի մարտի մեկին
ՀՀ ք. Ջերմուկ

Մենք՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը, ՀՀ քաղաքացիության անձնագիր AN0375614, տրված 20.02.2013թ. 035-ի կողմից, Ջերմուկ համայնքի հասցեն՝ ՀՀ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց 8, /այսուհետ՝ ,,Վարձատու,,/ մի կողմից և
ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ Անուբաղ Համբարյանը, ՀՀ քաղաքացիության անձնագիր BA0040009, տրված 23.12.2013թ. 001-ի կողմից, որը գործում է ՀՀ Ոստիկանության կանոնադրության հիման վրա, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ Ոստիկանության ՊՊԳՎ Ջերմուկի պահպանության բաժանմունքի պետ՝ Վաղինակ Փայլակի Գրիգորյանը, նույնականացման քարտ 004239489, տրված 23.08.2014թ. 037-ի կողմից,
այսուհետ՝ ,,Վարձակալ,, որոնք հանդիսանում են 2015 թվականի մարտի 23-ին ,,Վայք,, նոտարական տարածքում /Ջերմուկ/ կնքված և թիվ 52 ռեեստրով գրանցված ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, թիվ 8 /ութ/ հասցեում գտնվող շենքից 47.9 ք/մ ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի /այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր/ կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ համաձայնագիր/ Վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ

1) Կողմերի միջև կնքված Վարձակալության պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝
3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքի տարեկան վարձավճարը կազմում է 72.000 /յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամ գումար:
2) Պայմանագրի՝ Կողմերի վավերապայմանների հատվածում Վարձատուի ՀՎՀՀ-ի ,,09001192,, փոխարինել ,,08913735,, թվերով:
3) Պայմանագրի բովանդակության մեջ ,,քաղաքապետարան,, բառը փոխարինել ,,համայնքապետարան,, բառով:
4) Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Վարձակալության պայմանագրի բաղկացուցիչ անբաժանելի մասը:
5) Վարձակալության պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
6) Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
7) Սույն Համաձայնագիրն ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
8) Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 4/չորս/ օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է նոտարական տարածքի գործերում և մեկ օրինակը 30 օրվա ընթացքում պետք է ներկայացվի ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ գրանցման համար:

Վարձատու՝
Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց 8,
ՀՎՀՀ 08913735

ստորագրություն՝ .....

Վարձակալ՝
լիազորված անձ՝
ՀՀ ոստիկանության Վայոց ձորի ՊՊԳՎ Ջերմուկի պահպանության բաժանմունքի պետ

[illegible]

ՀՀ ք. Ջերմուկ: Երկու հազար տասնութ թվականի մարտի մեկին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Վայոց ձորի նոտարական տարածքի Ջերմուկ նոտարական գրասենյակի նոտար Ստեփան Ստեփանյան կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությանը: Համաձայնագրերը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ Ջերմուկի համայնքի սեփականության իրավունքները ստուգված են: Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա՝ գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրում երեսուն օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում՝ 46 ով
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ստեփան Վոլոդիայի Ստեփանյան